





ԽԱՏՈՒՏԻՎ /Taraxacum/

Դեղաբույսի լատիներեն անվանումը՝ Taraxacum, բարդաձաղկավորների ընտանիքին պատկանող բույսերի ցեղ: Հայկական տարանուններից են ակլատիզ, խմբաբա, խտուտ, խտուտիկ, կռաբանջար, պուպու, քոչի խոտ, մինչև 15սմ բարձրության հասնող բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս է: Խատուտիկի տերևները բազմաթիվ են, կանաչ, նշտարաձև կամ երկարավուն, ատամնավոր եզրերով: Ծաղկաբույլը զամբյուղ է, ծաղիկները լեզվակաձև, վառ դեղին: Սերմիկները թխավուն են կամ գորշ, որի օգնությամբ քամու միջոցով սերմերը թռչում են, տարածվում են ամենուր. ծլունակությունը պահպանում 10 - 12 տարի: Բույսը սկսում է ծաղկել մայիս-հուլիս ամիսներին, իսկ պտուղները հասունանում են օգոստոսին:



Աշնանը խատուտիկը նորից է ծաղկում այն նաև համարվում է մոլախոտ, աճում է այգիներում, ցանքերում, խամահողերում, արոտավայրերում, մարգագետիններում և այլուր՝ հաճախ տալով հոծ բուսուտներ: Բույսը լավ է աճում չափավոր խոնավ և հարուստ հողերում: Արմատը պարունակում է տրիտերպենային միացություններ, մինչև 40% ինուլին, մինչև 3% կաուչուկ, ճարպայուղ, որը պարունակում է գլիցերիդներ, դառը գլիկոզիդ տարաքսացին, խեժ, կալիումական և կալցիումական աղեր: Կաթնահյութը պարունակում է լակտուցերոլ, կաուչուկ, խոլին, ասպարագին, սապոնիններ, օրգանական թթուներ, խեժ, իսկ տերևները ճարպ, պարաքսանթին, կարոտինոիդներ, A, B1, B2, C, PP վիտամիններ, խոլին, թիրոզին, քիմիական տարրերից՝ երկաթ, կալցիում, մանգան, ֆոսֆոր:

Խատուտիկի որոշ տեսակներ



Զգուշացում: Խատուտիկը կլանում է մթնոլորտից վնասակար նյութերը, հատկապես՝ կապարը: Տերևն ունի հակամանրէ, հակաբորբոքային, արյունարգել, վերքամոքիչ, լեղամուղ հատկություններ: Իսկ արմատը՝ քրտնամուղ, լեղամուղ, լուծողական, թույները հեռացնող (հակատոքսիկ), հակասկլերոտիկ, հանգստացնող, հակաալերգիկ հատկություններ:

Բուժում է խատուտիկի հյութը: Մեծ կիրառում ունի խատուտիկի հյութը, որը հարգի է՝ որպես օրգանիզմն ամրացնող և տոնուսը բարձրացնող միջոց: Հյութը ստանում են բույսի բոլոր մասերից, հումքը նախապես (մոտ 30 րոպե) թրջեք թույլ աղաջրի մեջ (1թ/գ աղ, 400 մլ ջուր), որպեսզի լուծվեն դառնանյութերը, որից հետո ընկղմեք եռացրած ջրի մեջ, աղացեք և քամել:



Հյութի պահպանման առավելագույն ժամկետը սառնարանում ընդամենը 24 ժամ է, այն կարելի է պահեստավորել. 1 լ հյութը խառնեք 200 մլ օղու հետ, խմեք 1ճ/գ՝ օրը 2-3 անգամ, որպես արյունը մաքրող միջոց: Այս յուրահատուկ «լիքյորը» կարելի է խմել 1ճ/գ կիտրոնի հյութի կամ կես թ/գ մեղրի հետ: Օգտագործեք վարիկոզի, թութքի, փորկապության և այլ դեպքերում:

Հիպերտոնիա. Խմեք 20-ական մլ թարմ հյութ, օրը 3 անգամ՝ տաք ջրի հետ: Շարունակեք 2 շաբաթ:

Միգրեն. Խառնեք գազարի, սպանախի և խատուտիկի հյութերը ($3 \div 1 \div 1$): Խմեք 50մլ՝ օրը 3 անգամ, ուտելուց առաջ: Կոկտեյլն ունի հակավարակային հատկություն, խորհուրդ է տրվում գրիպի, բրոնխիտի, թոքաբորբի դեպքում:



Ստամոքսի քաղցկեղ. Աղացեք գազար, խատուտիկ, շաղգամ ($10 \div 3 \div 2$ քաշային հարաբերությամբ), խառնեք հյութերը: Խմեք 50մլ՝ օրը 10 անգամ՝ երկուական ժամ ընդմիջումներով:

Վահանագեղձի հիվանդություններ. Խմեք 3ճ/գ հյութ՝ օրը 3 անգամ: Խորհրդակցեք բժշկի հետ:

Օստեոպորոզ. Խառնեք խատուտիկի արմատի, շաղգամի և նեխուրի տերևների, գազարի հյութերը ($3\div 2\div 2\div 1$): Խմեք 50մլ՝ օրը 2-3 անգամ:

Մաշկային ցան, կորյակներ. Խմեք 2ճ/գ խատուտիկի արմատից ստացված հյութ՝ օրը 3 անգամ:

Արյունը մաքրող, անեմիա. Խառնեք խատուտիկի և եղինջի արմատից կամ եղերդակի տերևներից ստացված հյութերը ($1\div 1$): Խմեք 1ճ/գ, օրը 3 անգամ, գոլ ջրի հետ: 100 մլ խատուտիկի արմատից ստացված հյութի մեջ լուծեք 1ճ/գ բժշկական գլիցերին, 90%-ոց սպիրտ և զտված ջուր, քամեք թանգիֆով: Խմեք 1ճ/գ՝ օրը 1 անգամ: Շարունակեք 14օր, կրկնեք 1 ամսից:



Լյարդի հիվանդություններ. Լուծեք տերևից ստացված հյութը ջրի մեջ ($1\div 1$): Խմեք 1ճ/գ՝ օրը 2 անգամ:

Դիսբակտերիոզ, կոլիտ. 80գ մեղրը լուծեք 200մլ սառը ջրի մեջ, խմեք 90-100մլ՝ օրը 3 անգամ, ուտելուց առաջ:

Քրոնիկ փորկապություն. Բյուրեղացած մեղրը լուծեք գոլ կաթի մեջ ($3\div 40$): Խմեք 1-2ճ/գ՝ քնելուց առաջ:

Աղիները մաքրող. Մանրացրեք եգիպտացորենի չոր մազմզուկները, խառնեք խատուտիկի մեղրի հետ ($1\div 2$): Խմեք 1-ական թ/գ, օրը 3-5 անգամ, ուտելուց 15 րոպե առաջ:

Ժողովրդական դեղատոմսեր՝ արմատով, տերևով և ծաղիկով

Այրվածք. Մանրացրեք թարմ արմատը, 100 գ հումքը 40 օր թրմեք արևոտ տեղում՝ 500մլ արևածաղկի յուղի մեջ, պարբերաբար խառնեք, 40 րոպե տաքացրեք եռացող ջրային բաղնիքի վրա, քամեք սառը վիճակում, պահեք սառնարանում: Մշակեք վերքերը, թարախային խոցերը, կորյակները:

Ախորժակի անկում. 2թ/գ արմատը 8 ժամ թրմեք 200մլ՝ նախօրոք եռացրած, սառը ջրում: Խմեք 50-ական մլ՝ օրը 4 անգամ, ուտելուց 15 րոպե առաջ:



Սակավարյունություն. 1 թ/գ արմատը կամ արմատի և տերևի խառնուրդը (1÷1) 2 ժամ թրմեք 200մլ եռացրած ջրում, տաք տեղում, քամեք: Խմեք 50-ական մլ՝ օրը 4 անգամ, ուտելուց առաջ:

Փորկապություն, կարծրախտ. Փոշիացրեք խատուտիկի արմատը: Խմեք կեսական թ/գ՝ օրը 3 անգամ:

Հոդացավ. Մանրացրեք խատուտիկի ծաղիկները, 12 օր թրմեք օդու մեջ (1÷1), մութ տեղում, պարբերաբար թափահարեք, խառնեք, մզեք հումքը ոգեթուրմի մեջ: Շփեք հոդերը, մինչև զգաք ջերմություն, տաք պահեք:

Ռադիկուլիտ. Ապակե տարայի ողջ ծավալը լցրեք գլանաձև, մանր կտրատած խատուտիկի ցողունով, մնացածը լրացրեք անուշադրի սպիրտով, 7 օր թրմեք, քամեք: Շփեք մեջքին, ունի արագ ցավազրկող ազդեցություն:

Այտուցներ. Արմատը 12 օր թրմեք օդու մեջ (1÷10), քամեք, մզեք հումքը: Խմեք 30-ական կաթիլ, օրը 3 անգամ, ուտելուց 30 րոպե առաջ՝ 1ճ/գ ջրի հետ:

Նիհարեցնող. 1ճ/գ չոր (2 ճ/գ թարմ) տերևը 8 ժամ թրմեք 200 մլ եռջրում, ջերմապահի մեջ, քամեք: Խմեք 2-ական ճ/գ՝ օրը 8-10 անգամ:

Դիմադրողականությունը բարձրացնող. Խառնեք 200 հատ խատուտիկի ծաղիկները, մեկ մանր կտրատած կիտրոնը (կեղևով, առանց կորիզների), 1 լ ջուրը, 10 ժամ թրմեք, քամեք: Թուրմի մեջ լուծեք 1կգ շաքար, 1,5 ժամ եփեք թույլ կրակի վրա: Կերեք 1-ական թ/գ` օրը 3 անգամ:

Ավիտամինոզ. 1 ճ/գ չոր տերևը 10 րոպե թրմեք 400 մլ եռջրում, քամեք: Խմեք 100մլ` օրը 4 անգամ:

Լեղամուղ. Խառնեք 1թ/գ անմեռուկ ավազուտայինի ծաղիկ, խատուտիկի և եղերդակի արմատներ, 6 ժամ թրմեք 200մլ ջրում, քամեք: Խմեք 60մլ` ուտելուց 30 րոպե առաջ:



Շաքարային դիաբետ. Խառնեք հապալաս սևի և եղինջի տերևներ, խատուտիկի արմատ ($4\div3\div3$), 2 ճ/գ հումքը թրմեք 250 մլ ջրում, քամեք: Խմեք 100մլ` օրը 3 անգամ, ուտելուց առաջ:

Ճարպակալում. Խառնեք բեկտենի սովորականի կեղև, մաղադանոսի և հոռոմ-սամիթի սերմեր, խատուտիկի արմատ, դադձի տերև ($10\div4\div4\div3\div3$): 1ճ/գ հումքը 1 ժամ թրմեք 200մլ եռացրած ջրում, ջերմապահի մեջ, քամեք: Խմեք նախաճաշից 1-2 ժամ հետո: Շարունակեք 14 օր:

Հակաբորբոքային, թոքերի հիվանդություններ (եմֆիզեմա). Խառնեք գիհի սովորականի պտուղ, կեչու կեղև, խատուտիկի արմատ ($1\div1\div1$): 2 ճ/գ հումքը 15 րոպե եփեք եռացող ջրային բաղնիքի վրա, 200 մլ եռջրում, 45 րոպե թրմեք, քամեք, մզեք հումքը, վերականգնեք նախնական ծավալը եռջրով: Խմեք 100մլ` օրը 2 անգամ, ուտելուց 30 րոպե առաջ:

Նյութափոխանակությունը լավացնող. 1ճ/գ արմատը 2 ժամ թրմեք 200մլ եռջրում` տաք տեղում, քամեք: Խմեք 50մլ` օրը 4 անգամ, ուտելուց 30 րոպե առաջ:



Մաշկային հիվանդություններ. 1ճ/գ արմատը 15 րոպե եփեք 300 մլ ջրի մեջ, քամեք, մզեք հումքը եփուկի մեջ, վերականգնեք նախնական ծավալը եռջրով: Խմեք 100մլ` օրը 3 անգամ, ուտելուց առաջ:

Էկզեմա. Խառնեք 1ճ/գ խատուտիկի և կռատուկի չոր արմատներ, 8 ժամ թրմեք 600մլ ջրում, 10 րոպե եփեք, 20 րոպե թրմեք, քամեք: Խմեք 100մլ` օրը 5 անգամ:

Չոր մաշկի խնամք. 1ճ/գ արմատը 10 րոպե եփեք 400մլ եռացողած ջրում, 20 րոպե թրմեք, քամեք, խառնեք 50 մլ օղի: Մաքրեք դեմքն առավոտյան և քնելուց առաջ:



Լոսյոն. Խատուտիկի արմատը և վերգետնյա մասը կտրատեք, 10 օր թրմեք օղու մեջ (1÷1 ծավալային հարաբերությամբ), մութ տեղում, կիպ փակված տարայի մեջ, քամեք: Ոգեթուրմը լուծեք ջրի մեջ (1÷2):

Ճարպոտ մաշկ. Մանր կտրատեք տերևը: 10-15 րոպե պահեք դեմքի վրա, կատարեք շաբաթը 1-2 անգամ:

Մազերն ամրացնող. 1ճ/գ տերևը 30 րոպե թրմեք 200մլ եռացրած ջրում, քամեք: Ներմերսեք գլխամաշկին:

Լյարդը մաքրող. Աղաջրի մեջ թրմված տերևից մզեք հյուրը, լուծեք ջրի մեջ (1÷1): Խմեք 1ճ/գ` օրը 2-3 անգամ:

Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսաապամանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):